

Ս Ի Ո Ն

ԺԲ. ՏԱՐԻ — ՆՈՐ ՇՐՋԱՆ

1938

ՕԳՈՍՏՈՍ

ԹԻԻ 8

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ

ՆՈՐ ՏՈՄԱՐԻ ՀԱՐՑ

Եկեղեցական Բարեկարգութեան ծրագրին մէջ առաջիններու գիծին վրայ չի կրնար դրուիլ անշուշտ այս հարցը, քանի որ իր կարեւորութիւնը ոչ վարդապետական եւ ոչ բարոյական երես չ'ունի, եւ առ առաւելն երկրորդական աստիճանի եկեղեցագիտական արժէք մը կը ներկայացնէ:

Բուն խնդիրը, Հին եւ Նոր կամ Յուլեան եւ Գրիգորեան Տոմարներու Հարց, ծնունդ առաւ ԺՁ. դարու երրորդ քառորդին, երբ, Հինին գիտական անճշդութիւնները հաստատուած ըլլալով, Լիլիոս՝ Կլաւիոս եւ Սերլետոս գիտուններուն կողմէ նոր մը պատրաստուեցաւ աստղաբաշխական գննութեանց համեմատ, գիտնականապէս շատ աւելի կատարեալ գործ մը անշուշտ, եւ Հռովմայ Գրիգոր ԺԳ. Պապին (1573—1585) օրով եւ հրամանաւ կիրառութեան դրուեցաւ, այդ պատճառաւ եւս կոչուելով Գրիգորեան Տոմար:

Որովհետեւ այն ատեն Արեւելեայք որ եւ է կերպով չուզեցին շահագրգռուիլ այս նորութեամբ, հարցը սահմանափակուեցաւ Արեւմտեան քրիստոնեայ ազգերուն մէջ միայն: Անոնք ալ, սակայն, անմիջապէս եւ միահաղոյն չընդունեցին զայն. ամենէն առաջ Հռովմի ամենէն հաւատարիմ՝ ազգերը որդեգրեցին զայն, եւ յետոյ, յաջորդաբար, միւսները, ու ամենէն վերջը, ԺԲ. դարուն, Անկլիքան Եկեղեցին:

Խնդրոյն՝ մեր այս յօդուածաշարքին տեսակէտէն մօտենալէ առաջ սակայն, աւելորդ չնկատուի թերեւս բացատրական հալիւրճ նօթ մը դնել հոս, հարցը իր էութեանը մէջ ճանշնալու համար. այս պատճառաւ յաջորդ տողերուն մէջ յառաջ կը բերենք ինչ որ նոյն նիւթին վերաբերմամբ տարիներ առաջ մեր կողմէ դարձեալ գրուած էր այլուր:

Յուլեան Տոմարը, կամ Հին Տոմարը, որ Յուլիոս Կեսարի օրով գործադրութեան ընդունուած էր Քրիստոսէ 45 տարի առաջ, յաջորդելով Հռոմուլեան Տոմարին, տարին կը հաշուէր 365 եւ մէկ քառորդ օր, կամ երեք տարի յաջորդաբար 365՝ և չորրորդ տարին 366 օր: Այս հաշուումը աստղաբաշխօրէն եւ կատարելապէս ճիշդ չէր սակայն, զի խիստ պէտք տարին ոչ թէ 365 եւ մէկ քառորդ օր էր, այլ տասնութեկուկէս վայրկեան պակաս: Արդ, տարեկան 11,

30 վայրկեանի յընթացս դարերու այսպէս աւելի հաշուումէն, 900 տարիներու միջոցին եօթը օրերու սխալ մը զոյացած էր, այնպէս որ, 1582ին, աստղաբաշխական տարւոյն եւ տոմարականին միջեւ տասն օրերու տարբերութիւն մը առաջ եկած, կամ զարնան գիշերահաւասարը տոմարական հաշուումին մէջ տասն օր ետ մնացած էր իրականէն, այսինքն բնականէն։ Այդ սխալը ուղղելու համար կարգադրուեցաւ որ նոյն տարին տասը օրերու ռոտում մը ընեն եւ Հոկտեմբեր 5ը 15 հաշուեն, եւ ապագայի տարբերութիւններուն առաջնելու համար դարաւերջի տարիներու նահանջները զեղչուին, այսինքն սովորական տարիներու պէս 365 օր ունենան, ի բաց առեալ իւրաքանչիւր չորրորդ դարաւերջը։

Հին Տոմարը այդ որոշումը չընդունելով՝ 1582ին տասն օր տարբերութիւն ունեցաւ, իսկ վերոյիշեալ նահանջներու զեղչերը չընելով, 1700ին տարբերութիւնն եղաւ 11 օր, 1800ին 12 եւ 1900ին ալ 13 օր։ Այս տարբերութիւնը 2100 թուականին պիտի ըլլար 14 օր, եթէ Տոմարներու միացման գաղափարը չիրագործուէր տակաւին։

Պէտք է աւելցնել, սակայն թէ Նոր-Տոմարին գիտական ճշգրտութիւնն ալ կատարեալ չէ բոլորովին, և մանրբերորդական անճշգրտութեան մը գումարը 4050 տարուան մէջ մէկ օրուան տարբերութեան սխալը պիտի արտադրէ իր ժամանակին։

Երկու տոմարներուն տարբերութեան արդիւնքը ուշագրաւ կը դառնար Զատիկ տօնին պատճառաւ մասնաւորապէս։ Ըստ Նիկիոյ ժողովին կանոններուն, Զատիկ տօնը պէտք էր կատարել զարնան գիշերահաւասարէն (Մարտ 21) վերջ եկող լուսնի լրումին յաջորդող առաջին Նիրակիին. Հին Տոմարը գիշերահաւասարը կը կապէր տոմարական Մարտ 21ին, իսկ Նորը՝ աստղաբաշխականին կը հետեւէր. այնպէս որ Հինին Մարտ 21էն առաջ կատարուած կ'ըլլար արդէն, բուն այսինքն բնական գիշերահաւասարը։ Եթէ պատահէր որ լուսնի լրումը տեղի ունենար տոմարական եւ աստղաբաշխական գիշերահաւասարներու տարբերութենէն օր մը միայն ետքը եւ յաջորդող առաջին Նիրակիէն օր մը միայն առաջ, Հին եւ Նոր Տոմարներուն համար նոյն օրը կը կատարուէր Զատիկը. իսկ լուսնի լրումը որքան ուշ եւ յաջորդող առաջին Նիրակիէն եւս որչափ առաջ տեղի ունենար, նոյնքան աւելի կ'ըլլար երկու տոմարներուն Զատիկներուն հեռաւորութիւնը։ Եւ որովհետեւ Զատիկն է առանցքը շարժական տօներու խումբին, այս պատճառաւ անոր հետ կը տեղափոխուին բոլոր այդ տօները։

Նոր եւ Հին Տոմարներու այս խնդիրը շատոնց պիտի կարգադրուած ըլլար, եթէ ատոր արդեւէ եղած չըլլային զիսաւորաբար քաղաքական եւ պոպուլյար մը նաեւ եկեղեցական պատճառներ։ Եւ ճիշդ այդ պատճառներուն, մասնաւորապէս քաղաքական պատճառներուն բարձուած համարուելովէն էր որ Մեծ Պատերազմէն վերջ հարցը այժմէութիւն ստացաւ Արեւելեան Եկեղեցիներուն համար։

Քիչ մը աւելի պարզենք այս մասին մեր միտքը. Հին Տոմարը աւելի կանուխ պիտի ջնջուած լինէր Որթոտոքս Յոյն Եկեղեցիին եւ իրեն հետեւո-

դուժեամբ միևնույն մօտ եւ Նորը ընդունուած լինէր ամէնքէն, եթէ Ռուսիոյ Ձարական ռէժիմը այդ ընդունելութեան մէջ արեւմտեան ազդեցութեանց ճամբայ մը տեսնելու տկարամտութենէն տարուած չլինէր։ Ու Հայ Եկեղեցին եւս վաղուց պիտի ընդունած լինէր Նորը, եթէ մէկ կողմէն էլ միաժանի մէջ չզղացուէր Ձարական քաղաքականութեան հանդէպ նկատուածներու հարկը, եւ եթէ միւս կողմէ Պոլսոյ մէջ նոյնպէս անհրաժեշտ չհամարուէր ըզգուշաւորութեան պէտքը հանդէպ Օսմ. կառավարութեան, որ, վերջապէս հաշտ աչքով չէր կրնար դիտել որ եւ է նորութիւն, զոր իր հպատակ քրիստոնեաները կ'ընդունէին Արեւմուտքէն։ Մնաց որ ոչ միայն Ձարական կառավարութիւնը քաղաքական տարիք իր հաշիւը Հին Տոմարին համեմատ կ'ընէր, այլ նաեւ Օսմանեանը, որ ելեւմտականի տեղ ընդունած էր քրիստոնէական թուականը, կը հետեւէր նոյնպէս Հինին։ Եւ ասիկա անշուշտ դժուարութեանց ամենէն լուրջ կողմն էր։

Սա եւս ստոյգ է դարձեալ որ եթէ Եկեղեցական իշխանութենէ մը եւ կած լինէր Տոմարական միութեան առաջարկը կամ հրահանգ մը, զործը հաւանաբար պիտի բաղխէր կարեւոր դժուարութեանց, տրուած ըլլալով եկեղեցական իշխանութեանց միմեանց վերաբերմամբ ոչ այնքան կամ ոչ միշտ թոյլատու ընթացքը, եւ տրուած ըլլալով մանաւանդ այն հանգամանքը որ զուտ գիտական կամ կարգապահական խնդրոց մէջ իսկ նախաձեռնող եղած լինելու իրողութիւնը յետոյ գերազահութեան փաստ նկատել տալու միտումը իրական բան մը եղած է եկեղեցական իշխանութիւններէն ոմանց մօտ։

Այս բոլոր պատճառներով, Մեծ Պատերազմէն անմիջապէս յետոյ Հարցը նորոգուեցաւ գրեթէ ինքնաբերաբար։ Երբ Ձարականին յալորդող Ռուսական Պետութիւնը ընդունեց Նոր Տոմարը, 1922ին Ռուսաց Պատրիարքը եւս ընդունեց զայն. իրեն հետեւեցաւ նոյնպէս Վրաց Եկեղեցին։ Այդ միջոցին էր որ Կ. Պոլսոյ Յոյն Պատրիարքը, Մելիթէոս, ազատախօս եւ նորութեանց հետամուտ զլուս մը, փութաց ընդ առաջ։ Յունաստանի մէջ եւս համակրութիւն գտաւ նորութիւնը, ինչպէս, կարծես, Եուզօսլաւիոյ եւ Ռումանիոյ մէջ։ Բայց միւս Պատրիարքական Աթոռները, Աղեքսանդրիա, Անտիօք եւ Երուսաղէմ, մնացին վերապահ, ու Մելիթէոս ինքն էր որ Աղեքսանդրիոյ մէջ արծարծեց զայն յետոյ, երբ Կ. Պոլսէ հեռանալէն վերջ ընտրուեցաւ Պատրիարք Աղեքսանդրիոյ Աթոռին։

Բայց Յոյն Եկեղեցւոյ այն մասերուն մէջ ալ որոնք համակրութիւն ցոյց տուած էին Նոր Տոմարին, կարելի չեղաւ ամբողջապէս ընդունիլ զայն։ Չուզեցին, աւելի ճիշդ պիտի լինէր ըսել՝ չկարողացան ջատիկը, եւ հետեւաբար իր շրջանն ալ, գէթ ամենէն անձկագոյն պարունակին մէջ, դնել ըստ Նոր Տոմարի։ «Ջատիկի օրը՝ Նիկիոյ Տիեզերականը սահմանեց. Տիեզերական մը միայն պէտք է օրինադրէ անոր փոփոխութիւնը» պատճառաբանութեամբ մնացին կէս ընդունուածի ձեւին մէջ, որ Տոմարը բարեկարգել է աւելի՝ խառնավարեալ եւ երկակնեցող կերպի մը կը վերածէր զայն. այսինքն՝ զիտական բնոյթ ունեցող հարցի մը վրայ դաւանաբանական տեսակէտէ նայելու մտայնութիւն։

Խնդրոյն՝ Յունական Եկեղեցւոյ մէջ ստացած այս շփոթ վիճակին պատճառաւ էր հետեւաբար որ Արեւելեան միւս փոքր Եկեղեցիները — Ասորականը,

Ղպտականը եւ Եթովպականը — որոնք սկիզբէն կարծես կատկածանքով նայած էին գործին, յետոյ եւս որ եւ է քայլ չառին դէպի նորը, եւ ցարդ տնշարժ կը մնան Հինին մէջ:

Անդին, Ռուսաց Եկեղեցին, որ, ինչպէս տեսանք, շտապեր էր 1922ին ընդունիլ Նոր Տոմարը, դեռ տարին չբոլորած՝ հարկադրուեցաւ նահանջել դէպի Հինը, այսինքն յետս կոչեց Պատրիարքական հրամանագրով կատարուած տնօրինութիւնը, եւ իրեն հետեւեցաւ Վրացականը. պատճառը՝ ժողովուրդին բուռն պահանջն էր եղած, եւ հաւանաբար նաեւ, ինչպէս կը դիտէ Զեկուցումը, Յունական Եկեղեցիի հեռաւոր ազդեցութիւնը:

Այս է ահա Տոմարական Հարցին՝ Արեւեկան Եկեղեցիներու մէջ ստացած և այժմ ունեցած վիճակին պատկերը. Կ. Պոլսոյ և Աղեքսանդրիոյ Աթոռները, Ելլադա կամ արդի Յունաստանը, և Պալքանեստի մէկ կամ երկու Եկեղեցիներ կրտսով չափ ընդունած են նորը, Անտիոքի և Երուսաղէմի Աթոռները, Ռուսաց և Վրաց Եկեղեցիները, Ասորականը, Ղպտականը, Եթովպականը ամբողջովին յարած կը մնան Հինին:

Մեր մէջ, հարցը սկզբնաւորուեցաւ եւ իր ընթացքը կատարեց հետեւեալ կերպով. Էլմիածին, քիչ մը աճապարանքով, այսինքն հակառակ իր սովորութեան՝ առանց Կիլիկիոյ, Երուսաղէմի եւ Կ. Պոլսոյ Աթոռներուն եւս կարծիքը նախապէս հարընդելու, իսկոյն հետեւեցաւ Ռուսական Եկեղեցւոյ շարժումին: Բայց Գէորգ Ե.ի կողմէ 1923 Նոյեմ. 9ի Կոնստանդնուպոլսոյ արձակուած, պատահեցաւ Ռուսական Եկեղեցւոյ նահանջը. Մայր Աթոռը մասնուեցաւ կնճռոտ դրութեան. Էլմիածին չի նահանջեց. ինքը մնաց Նորին յարած. բայց, ինչպէս կը դիտէ Զեկուցումը, Համամիութենական սահմաններու Թեմերուն մէջ, ուր հայ ժողովուրդը ոռոս եւ վրացի ժողովուրդներու հետ սերտօրէն կապուած էր սովորոյթներով, ընտանեկան, վաճառականական եւ այլ հիմունքներով, եւ սովոր էր եկեղեցական տօները միասին կատարել, Նոր Տոմարի գործածութեան տնօրինութիւնը ջերմ ընդունելութեան չհանդիպեցաւ. ու դժգոհութիւնը աւելի զգալի դարձաւ Զատիկի տօնին, զոր ամէնքը առաջ սովոր էին միասին կատարել, իսկ այժմ ստիպուած պիտի լինէին անջատ տօնել:

Գալով Սփիւռքին, Հայրապետական Կոնգրակը ամէն տեղ դադափարաւ պէս ջերմ ընդունելութիւն գտաւ, նոյնպէս գործադրութիւնը, բացի բուն յունական երկիրներէ եւ այն վայրերէն ուր Որթոտոքս Եկեղեցւոյ ազդեցութիւնը զերակշիռ է, գորացուցիչ եղաւ, ինչպէս Կ. Պոլիս, Եգիպտոս, Սիւրիոյ եւ Լիբանանի Կիլիկիան Թեմերը, Իրազ, Իրան, Հնդկաստան, Ամերիկայ եւ այլն: Բացառիկներուն մէջ ամենէն ուշադրաւն է անշուշտ Երուսաղէմի Հայ Պատրիարքութեան Աթոռը, որ չկրցաւ և պիտի չկարենայ դաւանական բնոյթ չունեցող խնդրոյ մը համար տապնապնելու մասնել Ս. Տեղեաց իրաւակցութեան իր գոյավիճակը. այս պատճառաւ, Հոգեւոյն Դուրեան Պատրիարքի օրէն ցարդ կը շարունակէ հետեւել Հին Տոմարին:

Զեկուցումը, որ իր ներկայացուցած բոլոր խնդիրներուն եւ հարցերուն առթիւ իր կողմէ Թեալադրութիւններ կ'ընէ, այս հարցին առթիւ կը լռէ, բաւա-

կանալով միայն զայն իր ներկայ վիճակին մէջ յանձնել Աղգային-Եկեղեցական ապագայ ժողովին ուշադրութեանը :

Դժուար էր արդարև տարբեր կերպով, այսինքն վճռականօրէն մօտենալ ինչդրին : Հարցեր կան, զորս ժամանակը միայն կրնայ լուծել, ու Տոմարական Հարցը ատենցմէ է : Լաւագոյն էր անշուշտ սկիզբէն շտապած չլլալ եւ ֆնալ Հինին մէջ . բայց հարկադրիչ հանգամանքներ, որոնց ցոյց տուած անհրաժեշտութիւնը այսօր դժուար է այլ եւս յիշել, անխուսափելի դարձուցած էին այն ատեն եղած տնօրինութիւնը : Չատիկը իրական կամ տոմարական լուսնի լրումին կապելու եւ բոլոր տօները քանի մը եօթնեակ առաջ կամ վերջը կատարելու պարագան որ եւ է աւելցուած չունի քրիստոնէական հաւատքին հետ . ու չմոռնանք նոյն ատեն որ, ինչպէս վերեւ մատնանշուեցաւ, Նոր Տոմարն ալ, հակառակ Հինին վրայ ունեցած դիտական մեծազոյն առաւելութեանց, ինքն ալ բոլորովին ճիշդ չէ եւ չի կրնար ըլլալ, քանի որ ժամանակին բուն կշիռը եւ չափը կը խուսափին մարդկային հաշուողութեան ամենէն նուրբ ճշգրտութիւնէն :

Այնպէս որ եթէ ապագային, երջանիկ օր մը, գումարուած Աղգային Եկեղեցական ժողովը սահմանադրէ Հինին դառնալ վերստին, մենք ոչ կորանք պիտի համարինք զայն աղգային արժանապատուութեան համար եւ ոչ խղճահարութիւն որ եւ է պատճառաւ :

* * *

ԿՐՕՆԱԿԱՆ

ԱՍՏՈՒԾՈՅ ԱՆՈՎԷ ԿԱՏԱՐԵԼԱԳՈՐԾՈՒԱԾ ՍՐԲՈՒԹԻՒՆԸ

(Վերափոխման Ռփօրէթի Կիր.) (Ք. Կորնթ. Զ. 16-է. 1)

Քրիստոնեայ ծնած, քրիստոնէութեան կնիքը մկրտութեամբ ընդունած եւ կամ հաւատքով եւ համոզումով քրիստոնեայ եղած լինելու իրողութիւնն իսկ մարդուն ընդութեան մէջ կը դնէ արդէն սրբութեան ըսկիդ մը՝ իրեւ պարզեւ աստուածային, Իայց սկզբանաւորուած այդ վիճակը շարունակելը այսինքն զայն վարդապետելը եւ կատարեալ դարձնելը (= կատարել) քրիստոնէին իր անձնական պարտականութիւնն է այլեւս :

Արդ, Աստուծոյ իր մէջ սկսուած այդ գործը ինքը յաւաք տանելով՝ քրիստոնեան գործակից եղած կ'ըլլայ Աստուծոյ . ու առաքելաբար աստուածային այդ գործակցու-

թեան զազափարին հանդէպ պատկառ մընալու կեցուածքն է որ այս համարներուն մէջ կը կոչէ ճահ Աստուծոյ : Իր տեսութիւնն է ուրեմն թէ՛ որպէսզի մեր կեանքին մէջ անխափան յարատեւութեամբ իրականանայ հոգւով սրբագործութիւնը, պէտք է երկրւոյ անբնական միտք ունենանք միշտ Աստուծոյ գործակիցները, կամ, առ նուազն՝ ըստ ոմանց, գործաւորները եղած լինելնուս ճշմարտութիւնը, եւ ըստ այնմ վարենք մեր կեանքը :

Այդպէս ընելու, այսինքն սրբութեամբ ապրիլ եւ գործել կարենալու համար, անհրաժեշտ է՝ ամէն բանէ առաջ եւ աւելի՛՝ զիտնալ ընտրել իր ընկերը . ինչպէս տառաքան Էծկաններուն (Ք. Օր. ԻԲ. 10) անհամաձայն շարժումներէն կրնայ կտարիւ սալլը, նոյնպէս տարտմէա հոգիներու գոռակցութենէն կրնայ խանգարիլ ծառայութեան գործը :

Եթէ խնդիրը նիւթական կամ նոյն իսկ սոսկ ընկերային յարաբերութեանց վրայ լինէր, թերեւս այնքան մտահոգիչ չլլար վտանգը. զի այդ կարգի տարբերութիւն-